

գիրն է՝ իսկ մեկալին վրայ կը գրէին Ը, որ *condemno*, դատապարտեմ ին առջի տառն է, որով այս գրերը իրենց համար ազատութե կամ դատապարտութեան նշան մըն էին. և անոնց թուոյն համեմատ, ամբաստանեալը կամ կ'ազատէր և կամ կը դատապարտուէր: Իսկ թէ որ երկու գրերն ալ հաւասար թուով ըլլային, դատաւորներն աւելի գթութիւն կը բանեցնէին, որով ամբաստանեալը բոլորովին կը խալըսէր: Կիկերոնի ըսածին համեմատ, այս քուէները՝ յղկած ու մոմապատ դրամաձև փայտեր էին, որոնց վրայ վերի ըսած տառերը գրուած էին:

Ը հայոց մէջ, ինչպէս ալէք Տրեից ու Լրաբացուոյ մէջ, և Յունաց մէջ ալէքս, 1 թուանշանի տեղ կը գործածուի. իսկ գրոց լեզուին մէջ՝ ամենայն իրաց ծագումն ու սկիզբը կը նշանակէ. ինչպէս. Լք եմ ալէք և այլն:

Յունաց հին միտալներուն վրայ Ան, անոնց Լրգոս կամ Լթէնք կոխուած ըլլալուն նշանն է: Հիւպատոսաց դրամներուն վրայ այդ տառը նոյնպէս դրամատան տեղը կը նշանակէ. իսկ կայսերաց դրամներուն վրայինը սովորաբար կը նշանակէ *Augustus*, ( ) գոստոս: Ստորին կայսերութեան դրամներուն վրայ, որոնք իրաւցնէ տեսակ մը ստակներ էին և զորոնք ժողովուրդը կը գործածէր, Ա տառը կամ քաղբին նշանն է, ինչպէս Լնտիոք, Լքուիլէա՝ ուր դրամատունք կային, կամ դրամագործին անունը կը նշանակէ: Կաղղիոյ ոսկի ու արծաթ ստակներուն վրայ՝ այդ գիրը Լարիզու դրամոց նշանն է:

Եգիպտացուոյ մէջ խորհրդաւոր գիր մըն էր, որոնք պլիսաւոր տառերու տեղ կամ կենդանեաց պատկերներ, կամ անոնց յատկութիւն մը ցուցնող նշաններ կը գործածէին, կը կարծուի թէ իւրենց Ան նշանագիրը քաջահաւն էր, այս թուոյն Ան նման ըրած եռանկիւնաձև ընթացքին համար: Ուստի երբոր փիւնիկեցւոց տառերը, զորոնք կըսեն թէ Կադմոս գտած է, Եգիպտոս ընդունուեցան, Ա գիրը թէ իբրեւ

խորհրդաւոր տառ կրօնական բաներու մէջ, և թէ իբրեւ հասարակ գիր՝ կենաց պիտոյից մէջ կը գործածուէր:

---

Չու և տեղադրութիւնն կենդանեաց:

Կենդանեաց բնակութեան կերպին նայելով երկու դաս կրնանք բաժնել. ոմանք իրենց ծնած տեղւոյն կամ գաւառին մէջ բոլոր կեանքերնին կ'անցընեն, կամ շատ քիչ կը հեռանան, և ոմանք ալ ընդհակառակն տարւոյն որոշեալ եղանակներուն մէջ, և կամ առանց որոշեալ ժամանակ մը ունենալու, երկարատեւ ճամբորդութիւններ կ'ընեն, և երբեմն ալ ընդարձակ միջոցով կը հեռանան, սովորաբար քիչ մը ժամանակ կենալու համար, բայց շատ անգամ ալ գացած տեղերնին բոլորովին կը հաստատուին:

Յամր ու դժուարաշարժ կենդանիք, որոնք ըսել է թէ շուտով ալ կը նեղուին ու կը յոգնին քալելէ, թեթեւ տեղափոխութիւններ միայն հազիւ կ'ընեն: Լյսպէս չորքոտանիք և զեռունք ընդհանրապէս քիչ կը ճանապարհորդեն. իսկ թուոնք ընդհակառակն՝ եթէ մանաւանդ ի բնէ թւերնին ջօրաւոր ըլլայ և մեծ մարմին ունենան որ երկայն թուչլու յարմար գայ, ինչպէս նաև ձկանց մէջ ալ անոնք որոնց որ պոչերնուն կազմուածքը և լողալու թւերնին առանց շատ աշխատութեան դիւրաւ զիրենք առաջ կը տանի, ևս առաւել այն հեղանիւթը որուն մէջն որ կը գլտնուին դիւրացընէ իրենց լողալու շարժումը՝ յայտնի է որ երկայն ու հեռաւոր ճամբորդութիւններ կրնան կատարել:

Բաւոտանեաց տեղափոխութեան քիչ օրինակ կրնանք գտնել. որոնց մէջ իբրեւ կարգէ դուրս բան մը պէտք է սեպել տեսակ մը *լեմմինգ*՝ կոչուած մկանցը, որ անթիւ բազմութեամբ առանձին առանձին ծակերու մէջ կ'ապրին

Լաբոնիոյ լեռանց վրայ. և առանց որո-

էալ ժամանակ ունենալու՝ ատեն ատեն  
դէպ 'ի Սկիւանոս կամ 'ի Պոդնեան  
ծոց կը դիմեն . բայց հազիւ թէ տասը  
տարուան մէջ մէկ անգամ մը միայն կըր-  
նայ պատահիլ աս բանս : Եւ ճամբոր-  
դութիւնները սաստիկ ցուրտ ձմեռը  
էկած կը կանխեն , և անշուշտ է որ լե-  
ռիները բնական նախազգեսցութիւն  
մը կ'ունենան . վասն զի 1742ն երբ սա-  
ստիկ ցուրտ ձմեռն մը ըրաւ Լաբոնիոյ  
մէջ , և Շուետի հիւսիսային կողմե-  
րը համեմատութեւն չատ աւելի մեղմ էր  
ձմեռուան խստութիւնը , քանիւնները մէկ

երկրէն միւսն անցան : Բայց այս տե-  
ղափոխութիւնները ինչ պատճառէ ալ  
առաջ եկած սեպենք , այս յայտնի է որ  
հրաշալի միաբանութիւն մը կ'երևայ  
նոյն տեղ գտնուող նոյն ցեղ կենդա-  
նեաց բոլորին վրայ : Օրգահեռական  
գնդեր կը կազմեն , և բնաւ արգելք մը  
չկրնար խափանել և կամ իրենց ընթաց-  
քին ուղղութիւնը փոխել . ամբողջ ցո-  
րեկը հանգիստ կ'առնուն , և ուր որ  
հանգչին՝ իբրեւ թէ կրակն այրած ու  
մրկած ըլլար , ամէն բան կը փճացը-  
նեն :



Իսկ թռչնոց տեղափոխութիւնը ամե-  
ն ծանօթ են , և մէկը չկայ որ չգիտ-  
այ թէ սարեակը , տորդիկը , սոխակը ,  
խառնը , կիւռն , աղանին , կռունկն ,  
սագիլը , սագը , վայրի բազն և ուրիշ  
տ թռչուններ տարւոյն որոշեալ ժա-  
նակներուն ուրիշ կլիմաներ և ի-  
նց ախորժեղի բարեխառն գաւառներ  
անցնին : Եւս թռչուններէն շատե-  
ւ մի և նոյն ժամանակին մի և նոյն

տեղը կու գան կը հաւաքուին և ատե-  
նին ամէնքը միաբան ճամբայ կ'ելլեն .  
և անանկ կանոնաւոր շարքով և միան-  
գամայն անանկ լաւ դրիւք բանակ կը  
կազմեն՝ որ քիչ բռնութեամբ դիւրաւ  
կրնան օդը ճեղքել : Պիւֆին վայրի  
սագին վրայ խօսելու ատեն , ասոնց  
թռչելու կարգն ու կանոնը տեսնելով  
յայտնի կ'երևայ , կ'ըսէ , որ շատ թռ-  
չուններէ աւելի մեծ յարմարութիւնն ու-

և ըմբռնողութիւն մը ունին : Սպե-  
րուն թուշու գիծը կարծես թէ եր-  
կրաչափական ըմբռնողութեամբ մըն  
է, ու անանկ գեղեցիկ շարքով մը  
կ'երթան, որ կրնայ իւրաքանչիւրը ա-  
ռանց իր կարգը խախտելու, մի և նոյն  
միջոցին ազատութեամբ ու անարգել  
թուշիւ. այս կարգաւորութեամբ ա-  
ռանց աշխատութեան և բնական կեր-  
պով ու դիւրաւ օդը կը ճեղքեն, վասն  
զի երկու խոտորնակ գծով կը շարուին,  
Եւրոպացւոց V գրին նման անկիւն մը  
ձեւացնելով. իսկ եթէ քիչ ըլլան՝ մէկ  
գիծ մը միայն կը ձեւացնեն, բայց սո-  
վորաբար իւրաքանչիւր խումբ քառա-  
սուն յիսուն անհատէ աւելի կը բաղ-  
կանայ : Օլորմանալի ճշդութեամբ իւ-  
րաքանչիւրը իր տեղը կը պահէ. երբոր  
անկեան գլուխը կեցողն ու ամենէն ա-  
ռաջ օդը պատռողը կը յոգնի՝ անկեան  
ետեւը կ'անցնի, և յաջորդաբար այլք  
իր տեղը կը փոխանակեն :

Եւս ալ յայտնի է որ տեղափոխու-  
թիւն ընող և խմբովին կամ ընտանեօք  
ճամբորդութիւն ընող թռչուններէն  
շատը չեն ուզեր ծերոց մէջ խառնուիլ.  
ուստի նախ միաբան ընկերութեամբ  
ճամբայ ելլենէն ետքը, կը սկսին դաս  
դաս բաժնուիլ, և իւրաքանչիւրը իրեն  
հասակակիցներուն խմբին հետ կը միա-  
նայ : Հազիւ երբեք կը պատահի որ նո-  
րածին ձագերը իրենց առջի ծնած տե-  
ղը նորէն դառնան : Վարձեալ շատ  
անգամ կ'ըլլայ որ փոքրիկ ու նորածին  
թռչունները բոլորը մէկէն մէկ գա-  
ւառ մը կ'երթան, և ասոր հակառակ  
ուրիշ տեղ մը բոլոր հասակաւորնե-  
րը. և այս բանս աւելի յայտնի տես-  
նուած է ծիծառնիկներու, կռուկնե-  
րու և արագիւններու վրայ : Վան շատեր  
ալ որ ամէն տարի նոյն տեղը և մի և  
նոյն բոյնը կու գան կը թխսեն :

Տեղափոխութիւն ընող ձկանց մէջ  
աւելի զարմանալին ռիկա՝ ձուկը կրնայ  
սեպուիլ : Բաջները երկար ատեն ա-  
նանկ կարծուած էր որ ռիկաները ա-

մէնքը մէկէն ըստ կանոնեալ ժամանա-  
կի բւեռային ծովերուն ամենէն ցուրտ  
կողմերը կը քաշուին, և հոն իրենց ան-  
թիւ բազմութեանը բաւական կերա-  
կուր չկրնալով գտնել, ամէն տարի գար-  
նան Լարուպայի և Բլերիկոյ բարեխառն  
կողմերը բազմութիւ գաղթականու-  
թիւններ կ'արձրկեն. եղան ոմանք որ  
ինչուան անոնց ճամբու գիծն ալ որոշե-  
ցին : Եւ կարծուէր ևս որ այս բազմա-  
թիւ գաղթականութիւններէն մէկը  
Խալանտիոյ եղերքներէն քերելով, և  
դէպ 'ի Լոր-Լըկիւր իր ընթացքը ուղ-  
ղելով, կ'երթար Բլերիկոյ ծոցերը կը  
լեցուէր. և ուրիշ մ'ալ Լորուէկիայէն  
իջնելով Պալգիկ ծովը կը մտնէր, հոն-  
կէ ալ դէպ 'ի Սեծն-Բրիտանիա ուղ-  
ղելով, Պաղղիոյ և Սպանիոյ կողմերը  
կը զեղանէր :

Բիկաները խիտ առ խիտ և անհա-  
մար բազմութեամբ կը ծովեն. իրենց  
առջեւէն իբրեւ կարապետ թանձր և  
խժային նիւթով մը բոլոր ծովը կը  
ծածկեն, որն որ գիշերը լուսաւոր կ'ե-  
րեայ, կ'ըսեն ճանապարհորդք : Բայց  
իսկ մը ծովային թռչուններ, շանաձրկ-  
ներ ու կէտեր աս խումբերուն վրայ  
յարձրկելով շատ փնաս կը հասցնեն ու  
կը քիչցնեն. ձկնորսներն ալ յարմալ  
ժամանակ սեպելով այս առիթս բաղ-  
մութեամբ որսի կ'ելլեն : Բլենէն մեծ  
որսը յունիս ամսոյն վերջէն ինչուան  
յունուարի ըսկիզբը կը տեւէ : Եւս  
ղեր է ձկնորսաց չեղած ծովերու մէջ  
ալ ռիկա աճեցնել. մասնաւորապէս  
մեծաւ առատութեամբ կը գտնուի  
հիմա Շուետի և Բլերիկոյ ծովա-  
փանց վրայ, ուր որ առաջ բնաւ չէ  
գտնուէր :

Ուրիշ տեղափոխութիւն ընող կեն-  
դանեաց մէջ մտադրութեան արժանե-  
ն բանի մը տեսակ խեցգետիններն ու  
մարաինները, որ անհամար թուով եր-  
կրի մը վրայ թափելով շատ անգամ  
ամբողջ դաշտերն ու մշակուած երկիւր-  
ները անապատ կը դարձնեն, և անուան  
աւերմունքներ կը պատճառեն որ մալ-  
դուս մտքէն ալ չանցնիր, ինչպէս որ ա-

կանատես ճանապարհորդներ հաւաստեօք կը վկայեն :

Մարախներուն և ուրիշ միջասնէլուն տեղափոխութիւնը ամենևին թրունոց և ձկանց տեղափոխութեանց պէս կանոնաւոր չէ . այլ լեհականներուն ըրածին պէս անկանոն և բարեբաղդաբար խիստ ցանցաւ է : Բայց ինչ է արդեօք այս տեղափոխութեանց պատճառը : Միջասնէլուն և լեհականներուն համար հաւանական կ'երեւայ որ սաստիկ աճելով երբ իրենց շատուորութեանն համեմատ կեցած տեղերնուն կերակուրը քիչ կու գայ , սովէ չնեղուելու համար իրենց բնակութեան տեղերը կը թողուն ու ճամբորդութեան կ'ելլեն , և ինչ որ առջևնին ելլէ կը ծախեն կը սպառեն : Երկուստեք ձկանց տեղափոխութեան պատճառն ալ յայտնի է , և ասոնց շրջանաւոր ընթացիցը պատճառ կրնանք սեպել իրենց հակիրթները ձգելու համար յարմար տեղ մը փնտռել . վասն զի յայտնի գիտենք որ տեղափոխութիւն չընողներն ալ մի և նոյն ժամանակին նոյն վախճանաւ գետերէն դէպ 'ի վեր կը սկսին երթալ :

Իսկ թռչնոց շրջանաւոր տեղափոխութեան ուրիշ պատճառներէ դուրս , յայտնի պատճառ մըն ալ է եղանակաց փոփոխութենէն խալըսելու հարկը : Երբ ասպէս ահա այլ և այլ տեսակ թռչուններ , գարունն ու ամառը մեր երկիրներն անցընելէն վերջը , աշնան աւելի մեղմ ու բարեխառն կլիմաներու տակ կը դիմեն . և փոխադարձաբար շատ տեսակներ ալ որ միայն ցուրտ եղանակներու մէջ մեր կլիմաներուն տակ կու գան , ձմեռուան վերջը մեղմէ կ'ելլեն հիւսիսային աշխարհքներ կ'անցնին , աւելի զով տեղեր գտնելու համար :

Մեր Լըզնիկ հայրապետն ալ իր Եղծաշարի գրքին մէջ անասնոց այլ և այլ բնական ազդմունքն ու բերմունքները յիշելուն ժամանակ՝ նոյնպէս բնական ազդումն կը համարի թռչնոց այս առեւտնականաց պանդխտութիւն . և նախ լեզնէն վերջը թէ անասունք միայն յի

շողութեամբ առ օգտակարն կը դիմեն և փնտաակարէն կը խորշին , գեղեցիկ ոճով մը կը յաւելու . « Յորս են և ազդմունք ինչ բնականք՝ որովք հանգերձելոց իրիք իրսց ազդ լինիցի նոցա . որպէս ձիոյն՝ 'ի սմբակէն վարելոյ . և եզինն՝ ձմեռանի ընդ ալուց կողմն նստելոյ և մօտ 'ի գարունն ընդ դրաց կողմն դառնալոյ . և ծիծռան՝ յառաջ քան զաշունն 'ի ջերին տեղիս 'ի ձմերոց երթալոյ . և խորդոյն՝ իմանալ յառաջագոյն զձմեռունս կարեւորս , և վաղ 'ի մարմանդ տեղիս փութալոյ . և ճայից՝ վաղազոյն տարմատարմ շրջելոյ . և ազաւնեաց՝ համագունդ երամ երամ խաղալոյ . և ագռաւուց՝ 'ի ծմակաց վաղազոյն 'ի ջերին տեղիս գնալոյ՝ և անգեղց՝ 'ի հեռաստանէ զգիշոյ ականելոյ դիտաւորութեան » :

Եւս գեղեցիկ հատուածէս վերջը , լսենք նաև Շաղպարիանի ըրած այս սքանչելի նկարագրութիւնը՝ թռչնոց տեղափոխութեանը վրայ :

Մինչ կէսք 'ի համագոյից անշարժք 'ի կայից իւրեանց հոչակեն հանապազօր գութութեամբ զԱրարչագործին մեծութիւն , այլք ընթանան քարոզք սքանչելեաց նորա : Սուրան ընդ օդս իբրև սուրհանդակք , սահին ընդ ջուրս , վազեն ընդ լերինս և ընդ ձորս : Են որք 'ի թևս գարնայնոյ եկաւորեալք և ընդ քաղցրաշունչ օդոց մեկնին տարազնացք՝ գաւառէ 'ի գաւառ զանկայուն հայրենիսն շրջնցուցանելով . այլք 'ի բնակութիւնս մարդոյ դադարեն , պանդուխտք տարաշխարհիկք՝ զվաղնջուց ժամանակաց աղերսեն զհիւրասիրութիւն : Իւրաքանչիւր ըստ թելադրելոյ բնութեանն ընտրէ զիւր դադար . կարմրալանջն իջանէ 'ի հիւզս , ծիծռանիկ՝ դուստր թագաւորի՝ զդրունս պալատանց բախէ . թուի տակաւին սիրող լինել մեծութեանց , այլ տխուր մեծութեանց՝ ըստ իւրոյ բաղդին . անցուցանէ զամառնն յաւերակս վերսայլի , և զձմեռնն 'ի թերայ :

Չեմ ծիծռանն անհետացեալ՝ խումբ այլ գաղթականաց յառաջէ գայ 'ի թևս հողմոց հիւսիսի , փոխանակել զուղեւորեալսն ընդ հարաւ , զի մի երբեք ամայասցին դաշտորայքս մեր : Ի մոսային աւուր աշնայնոյ , երբ հիւսիսի շնչէ ընդ արտորայս և մայրիք մերկանան 'ի սպառ և 'ի յետին սա

դարդունքն իւրեանց, խոսմբ իմն բաղից վայրենեաց տողեալք համայն ըստ կարգի անցանեն անշունչ ընդ տխրամած երեսս երկնից. և ուր ուրեք նշմարեն 'ի բարձանց օթեման գոթացի՝ մացառօք և լճիւք չրջապատեալ, անդ է տեղի իջեմանի նոցա, և սպասեալ գիշերոյ զգազաթամբք մայրեացն ոլորտս առնուն. և այն ինչ գոլոշիք երեկորեայք մածնուն 'ի հովիտսն, երկայնաձիգ ուլանց կարկառմամբ և թեւաբախ շառաւմամբ փութանակի մխրճին յալիս ըզջուրսն հնչեցուցանելով. և զխորին լուծիւնն լուծեալ՝ միաձայն աղաղակաւ զեղտիւրսն գոչեցուցանեն: Եւ յաղօտ նշոյլ ճրագի՝ զոր թէ տեսանիցեն նշողեալ ընդ անձուկ լուսամուտ միոյ ուրուք յաշտարակաց, ընդ ստուերախառն շամբս յորմունս անդր մատուցեալ հիւրքս ռահահորդք, բաբախմամբ թեոց և կարկաշմամբ խառն ընդ շառաչուկ հողմոց և անձրեաց ողջունեն զօթեմանն մարդկան ընկալուչ:

Մի է 'ի գեղանի բնակիչս առանձնոցացդ կոչեցեալն մարի ջուրց, պանդխտական ոչ յոյժ 'ի հեռաստանէ. որ յեղբրս պուրակաց երեւալ, մխի սուզանի 'ի բաւիղս նոցուն, մերթ երեւալ և մերթ ծածկեալ, արձակելով մնչիւն իմն նուրբ և խրժական, զգնայ ընդ խրամս դղեկաց: Ախորժէ դարել 'ի նշանակսն քանդակեալս յորմս. յորս 'ի կալն անշարժ, սեւաթոյր փետրովքն և կնիքն սպիտակադրոյմ 'ի գլուխ, թուի իմն թռչուն գրողմաւոր անկեալ յասպարէ վաղեմի ասպետի: Ի մօտել վարնայնոյ մեկնի յանձանօթ աղբերակունս, ուր արմատ ուռենւոյ փապարեալ 'ի ջուրց՝ ապաւէն է նմա, յորում ծածկի անտես յաշաց: Լօռք, մամուռք և ձարխոտք ջրայինք կախին զբունովք նորա իբրեւ զկերպասս դալարեաց. կոտեմ և ոսպն պատրաստեն նմա խորտիկ քաղցրաճաշակ. մեղմաձայն կարկաշ ջուրց դգրչեն յունկն նորա. զեռունք զեղեցկատեսիլք զաչսն պարարեն, և յաւերժ հարսունք վտակաց՝ առ 'ի պարածածկել զգեռածին մայրն՝ աճեցուցանեն զնովաւ զաղեկատու շամբից՝ պատատեալս յասր ծիրանի:

Ի հիւսիսական եկաւորաց աստի եմն՝ որոց ընտելացեալ բարուց մերոց հրաժարեն վերադառնալ 'ի հայրենիս. կէսք իբրեւ զհամհարզս Աղիսեայ գերեալք 'ի ճաշակաց քաղցրութեան պտղոց, և այլք որպէս զգասալիք փախստեայս 'ի նաւուցն Գուքայ բմբունեալք 'ի հրապոյրս հնշտանաց, յորոց և արգելեալ դադարեն 'ի կղզւոյ անդ իւրեանց, այլ բազում այնք են որք յետ ամսոց ինչ բնակակցութեան

մեկնին առ 'ի մէնջ յեցեալք 'ի թեւս հողմոց և մրրկաց, որոց զյատակութիւն ալեացն պղտորեալ դիւրամատոյց առնեն նոցա զորսն որ 'ի պայծառութեան ջուրցն խուսէր և ճողոպրէր 'ի նոցանէ: Քաղցր և սիրելի են նոցա վայրք անձանօթք, և յաճին ընդ ոլորտս երկրի շուրջ եկեալ ընդ ամայիս:

Այլ ոչ միշտ երամովին գան յայցելութիւն բնակութեանց մերոց. է զի զոյգ հիւրոց գեղանեաց՝ սպիտակք իբրեւ զծիւն, և կաւորին ընդ եղեման, և 'ի միգի իջանեն 'ի վայր բացարձակ, ուր չիցէ հնար մատչել առ նոսա անտեսաբար. և ժամս ինչ հանգուցեալք՝ ծրարին վերստին յամպս: Փութա երթ 'ի վայրն ուստի մեկնեցանն, և չգտանես՝ բայց փետուրս ինչ՝ միայն նշանակս անցից նոցա, զորս հողմն առ տառաւ վաղվաղակի. բարեբախտ սիրելին մուսայից, որ հանգոյն կարապանց վերացաւ յերկրէ՝ ոչինչ թողլով յիւրոցն նշխար յիշատակի՝ բայց զփետուրս ինչ 'ի թեւոց իւրոց:

Ըստ պատշաճի յարմարութեան համագոյիցս բնութեան, կամ ըստ օգտի մարդկութեանս սահմանին աղգի աղգի կենդանեացն տեղափոխութիւնք: Թռչունք 'ի մրրկալից ամիսս երեւեալք՝ տխրածայնք են և դժնեայք բարուք, հանգոյն եղանակին յորում երեւին. ոչ գան զի լսելի լինիցին այլ զի լուիցեն. նա և 'ի խուլ մռնչիւնս մայրեաց է ինչ որ հնշտացուցանէ զլսելիս: Որք զլերկ գազաթունս իւրեանց ճօճեն տրտմութեամբ մայրիք՝ միայն հանգրուանք են տխրեանդ հուլիցն որ գան ձմերել 'ի միասին, որոց գոն պահանորդք և յառաջապահք: Բազում այն է զի ազաւ հարիւրեմեան, հինաւորց սիբիլա անապատի, ուրոյն միայնակ դարեալ նստի 'ի ծերակից իւր կաղնւոյ. անդ՝ 'ի լուծեան քերցն բոլորեցուն, անխիտտ ամենեւին և գողցես խորասոյդ 'ի խորհուրդս՝ աւանդէ հողմոց վանկս մարգարէականս:

Վիտելոյ է դարձեալ զի մրտմունք, սաղք բաղք, կտցարք, քարադր և սիրամարգէ անընտելք որք 'ի սնունդ են մեզ, յամալ յանալ երեսաց երկրի գան երեւին. մինչ այլ տարաշխարհիկ թռչունք երեւալք յարմրեաց ժամանակի՝ համայն 'ի զուարճութիւն մեր են, և որպէս երաժշտակք նուազաւորք 'ի պայծառութիւն մերոց խրախճանացս առաքեալք: Են և սակաւք ոմանչ զարտուղեալք յօրինաց աստի, որպիսիք են լորն և աղաւնին վայրենի, զորս զկնչ հնձոց 'ի դէպ է որսալ, զի և նոքա յարմլտիս մեր պարարեալք գան 'ի սպասս սեղա.

նոց մերոց: Այսպէս հողմն հիւսիսոյ զհիւսիսական թռչունն տեղայ 'ի մեզ իբրեւ զմանանայ, և զեփիւռ քաղցրաշունչ զսոխակսն ընծայաբերէ. յորմէ կողմանէ աշխարհիս և շնչեսցեն հողմք, բարձեալ բերեն զպարգևս ինչ վերնախնամ տեսչութեան:

### Առաւարտաւորքեան nձ:

Պարութեան ոճոյ մէջ տեսակ մը առատութիւն կայ, որ եթէ ըստ պատշաճին գործածուելու ըլլայ, անոր աւելի գեղեցկութիւն և ճոխութիւն մը կուտայ. և այս առատութիւնը ուրիշ բան չէ՝ բայց եթէ ընտիր բառից և գեղեցիկ դարձուածոց յաճախութիւն մը, մտածութեան, զգացման և երեւակայութեան այլ և այլ աստիճանները ճշդիւ բացատրելու համար:

Կայ նաև տեսակ մը սնոտի առատութեան, որով մէկը բաւերը խիտ առ խիտ բարդելով, կը ջանայ անով ծածկել իր հանձարոյն անբեղնու-

թիւնն և մտածութեանցը չքաւորութիւնը:

Ինչ որ մէկը ուզէ դիմացինը զգացընել, կամ անոր հաճոյ ըլլալ և կամ պարզապէս զինքը կրթել, ոճոյ առատութիւնը միշտ զգացմանց և մտածութեանց մէջ պէտք է բանեցընէ, ան ալ եթէ որ այնպիսի նիւթ մը ըլլայ որ զայն վերցընէ, և կարենայ ուզածին պէս ընդարձակուիլ. այն առեւն մտածութեան հետ բացատրութիւնն ալ հաւասարապէս առատաբար կը ծաւալին:

Փութ տեղը և շատ անգամ առանց վախճանին ալ հասնելու կ'աշխատի մէկը, եթէ դիմացը խեղճ կամ երկրորդական մանր նիւթ մը առած ուզենայ զայն զարդարելով ճոխացնել կամ ընդարձակել:

Եթէ, զոր ոմանք քերդողական ընտիր ճաշակի օրինակ սեպեցին, այն մարդը՝ որ բանաստեղծական գեղեցկութեան և վայելչութեան և ոչ գաղափարն անգամ ունէր, քառասուն տող կը շարէ միայն ի՞նչէս Սորէլի գեղեցկութիւնն ու զարդարանքը նկարագրելու համար, այս ոճով:

Յերկուսին ծայրս երկուցն ամփոփ թեզանեաց  
Կան հորանեալ զոյգ ձեռք երկայնք՝ ձիւնազգեսաց.  
Ս'ատունքն անհարթ, այլ վայելուչք բոլորչի,  
Ձիգ ըստ ծրղեացն առոյգագեղք նրբենի:

Ինչ աստեղծութեան մէջ սիրտ շարժելու արուեստն է՝ հանձարով զուրիշը զգացընել. այն առեւն առատութիւնը այնպէս պէտք է բանեցընել որ քիչով շատ բան հասկըցուի. որ է ըսել՝ պէտք է թեթև և կտրուկ իմաստներ գնելով

դիմացինին երևակայութեանը թողուլ որ մնացածն ինքը մնալին մէջ խորհրդածէ:

Տես թէ ինչպէս Ս' իրգիլիոս չորս տողով զՍտոլիկ իբրեւ օրսորդ կը ստորագրէ.

Օ՛ր կրէր կախեալ զուսոյ աղեղն յաջողակ,  
Որպէս օրսորդ, թողեալ հողմոյ զհերսն արձակ.  
Եւ մերկ ի ծունկրս խորշաբաղ ի հանգոյց  
Ի զլայն քըղանցսն հանգրիճեալ ըզգեստուց:

Իայց եթէ որ այն տեսակ քերդութիւն մը ըլլայ, որուն մէջ հարկաւ մանր մոնր նկարագրութիւնք կը յաճախեն, ամէն բան կերպով մը մո-

տանց դիմացինին աչքին առջևը գնելու համար, և որուն գլխաւոր յարգը պարագայից յաճախութեանը մէջն է, ինչպէս Ս' իրգիոսի Ս' յակերպութեանց, և